Մրցույթ՝ ՀՀ Արմավիրի մարզի «Վաղարշապատի «Ներսիսյան» թիվ 6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ԹԳՀԳ / 8 դասաժամ/ և Երաժշտություն /16 դասաժամ/ ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է մասնակիցը ԴԿՏՀ-ում լրացնում է դիմումը և մուտքագրում հետևյալ փաստաթղթերի լուսապատճենները.
- դիմում, ինքնակենսագրություն
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ,
-<<Հանրակրթության մասին>> օրենքի 26-րդ հոդվածի պահանջով հերթական ատեստավորման արդյունքում աշխատանքից ազատված լինելու դեպքում՝ հերթական ատեստավորումն անցած լինելու մասին տեղեկանք:

Մասնակիցը ներբեռնված փաստաթղթերի բնօրինակները մրցույթի օրվան նախորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում առձեռն ներկայացնում է տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձին, որը դրանք համեմատում է ԴԿՏՀ-ում ներբեռնված փաստաթղթերի հետ, ինչից հետո նույն օրը բնօրինակները վերադարձնում է մասնակցին:

Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև մրցույթին նախորդող աշխատանքային օրը առձեռն ներկայացնել, իսկ ԴԿՏՀ-ում ներբեռնված փաստաթղթերի դեպքում՝ նույն համակարգում ներբեռնել անհրաժեշտ փաստաթղթերը:

Փաստաթղթերն ընդունվում են 12. 01. 2026 թ. -ից մինչև 23. 01. 2026 թ. -ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 16:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2026 թ. հունվարի 30-ին՝ ժամը 14:30-ին,<<Վաղարշապատի «Ներսիսյան» թիվ 6 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ում, հասցե՝ ք. Վաղարշապատ,Սուրբ Մ. Խորենացի 101:

Տեղեկությունների համար զանգահարել 060 86 02 13 հեռախոսահամարով: